# *ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՊԼԱՆ «ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ»*

| 1. Արժեթղթերի շուկայում խորհրդատվական ծառայության մատուցման | *Սակագին* | *Ժամանակահատված* |
|---|---|---|
| **Ֆիզիկական և իրավաբանական անձ հաճախորդներ** | 85000 ՀՀ դրամ | Ամսական |

1. *Սակագներում ներառված են ԱԱՀ-ը:*
2. *Սակագնով սահմանված գումարի առաջին վճարման կատարման օրն է պայմանագրի կնքման ամսաթիվը (գանձումը կատարվում է պայմանագրի կնքման պահին), իսկ հաջորդող վճարումների համար վճարման կատարման օր է հանդիսանում յուրաքանչյուր ամսվա համապատասխան ամսաթիվը /կնքման ամսաթվին համապատասխանող ամսաթիվը/ (այսուհետ՝ Վճարման օր), ընդ որում, եթե Վճարման օրը համընկնում է համապատասխան ամսաթիվ չունեցող ամսվան, ապա Վճարման օր է համարվում այդ ամսվա վերջին օրը:*
3. *Խորհրդատվությունը տրամադրվում է վճարման փաստացի կատարմանը հաջորդող աշխատանքային օրվանից մինչև հաջորդ Վճարման օրը ներառյալ:*
4. *Սակագնի վճարումը Վճարման օրը չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու դեպքում Բանկը կասեցնում է խորհրդատվության տրամադրումը: Խորհրդատվության տրամադրումը վերսկսվում է սակագներով սահմանված ժամկետներում և կարգով՝ ամսական սակագինն ամբողջությամբ վճարվելու դեպքում: Բանկն իրավունք ունի մինչև վճարման պատշաճ կատարումը դադարեցնել Պայմանագիրը, եթե կասեցման ժամանակահատվածը տևում է երեք ամսից ավելի:*
5. *Հաճախորդի բանկային հաշվին բավարար դրամական միջոցներ լինելու պարագայում Բանկին վճարվելիք գումարները Բանկի կողմից անակցեպտ կարգով (առանց Հաճախորդի լրացուցիչ համաձայնության) գանձվում են Հաճախորդի բանկային հաշվից, որի համար Հաճախորդը, սակագնային փաթեթն ընտրելով և ստորագրելով պայմանագիրը, տալիս է իր համաձայնությունն ու հանձնարարականը:*